



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՈՒ ՀԱՆԱԿԱՆ ԳՐԻՍՏՈՒՄԻՆԱՆ ԵՎ ԿՐԻՍՏՈՒՄԻՆԱՆ ԵՎ ԿՐԻՍՏՈՒՄԻՆԱՆ ԵՎ ԿՐԻՍՏՈՒՄԻՆԱՆ

ԿԱՆՈՒՄ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GREGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՆՏԱՐ

ԿԻՐԱԿԻ, 17 ՆՅՆԵՄԵՐ 2019

137

DIMANCHE, 17 Novembre 2019

Prémice de l'Avent



ՅԻՍՆԱԿ

Բարեկենդան և
Պահք Յիսուսակաց

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ժ Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին
10^{ÈME} DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒՍԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-11)
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (9.44-50)

Les lectures de la Bible d'aujourd'hui
PHILIPPIENS 1.1-11
LUC 9.44-50

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին
Office Matines à 9h30
Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին
La Sainte Messe à 10h30
Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին
Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

Chef de chœur: M. Sarkis Barsemian
Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՓԻԼՊՊԵՑԻՆԵՐ 1.1-11

1Պօղոս եւ Տիմոթէոս՝ Յիսուս Զրիստոսի ծառաները՝ Զրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն, որ Փիլիպպէի կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւագներով. 2շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Զօրմէն, ու Տէր Յիսուս Զրիստոսէ:

3Շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս՝ ձեզմէ ունեցած բոլոր յիշատակներուս համար, 4ամէն ատեն՝ ամէն աղերսանքիս մէջ: Ուրախութեամբ կ'աղերսեմ ձեր բոլորին համար, 5քանի որ հաղորդակից եղաք աւետարանին՝ առաջին օրէն միևչել հիմա. 6այս մասին համոզուած եմ թէ ա՛ն որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ, պիտի աւարտէ միևչել Յիսուս Զրիստոսի օրը: 7Իրաւացի ալ է ինծի այսպէս մտածել ձեր բոլորին մասին, քանի որ ձեզ ունիմ իմ սիրտիս մէջ՝, ու դուք բոլորդ հաղորդակցեցաք ինծի եղած շնորհքին՝ թէ՛ իմ կապերուս, թէ՛ ալ աւետարանին ջատագովութեան եւ հաստատութեան մէջ: 8Որովհետեւ Աստուած վկայ է թէ ո՛րքան կարօտցած եմ ձեզ բոլորդ՝ Զրիստոս Յիսուսի գութով, 9ու սա՛պէս կ'աղօթեմ՝ որ ձեր սերը հետզհետէ աւելի առատանայ գիտակցութեամբ եւ ամբողջ դատողութեամբ, 10որպէսզի դուք զատորոշէք տարբեր բաները՝ անկեղծ եւ անսայթաք ըլլալու համար միևչել Զրիստոսի օրը, 11լեցուած արդարութեան պտուղներով Յիսուս Զրիստոսի միջոցով՝ Աստուծոյ փառքին ու գովութեան համար:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՄԻ 9.44-50

44Բոլորը կ'ապշէին Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ: Միևչ բոլորն ալ կը սքանչանային Յիսուսի բոլոր ըրածներուն վրայ, ան ըսաւ իր աշակերտներուն. «Դուք այս խօսքերը ձեր մի՛տքը պահեցէք՝, որովհետեւ մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: 45Բայց անոնք չէին հասկնար այս խօսքը, եւ անոնցմէ ծածկուած էր՝ որպէսզի չըմբռնեն. ու կը վախճային հարցնել իրեն այդ խօսքին մասին:

46Մտածում մըն ալ ծագեցաւ անոնց մէջ, թէ արդեօք ո՛վ է մեծագոյնը իրենց մէջ: 47Յիսուս ըմբռնելով անոնց սիրտին մտածումը՝ առաւ մանուկ մը, կայնեցուց զայն իր քով, 48ու ըսաւ անոնց. «Ո՛վ որ կ'ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զի՛ս կ'ընդունի, եւ ո՛վ որ զիս կ'ընդունի՝ զիս որկո՛ղը կ'ընդունի. որովհետեւ ա՛ն որ ամենէն պզտիկն է ձեր բոլորին մէջ, անիկա՛ պիտի ըլլայ մեծը»:

49Յովհաննէս ըսաւ. «Վարդապէտ, մէկը տեսակը որ դէւեր կը հաներ քու անուկովդ, եւ արգիլեցիկը գայն՝ քակի որ մեզի չի հետեւիր»: 50Յիսուս ըսաւ անոր. «Մի՛ արգիլեք, որովհետեւ ան որ մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է»:

Philippiens 1.1-11

1Paul et Timothée, Serviteurs de Jésus-Christ, à tous les Saints en Jésus-Christ qui sont à Philippes, avec les Evêques et les Diacres. 2Que la grâce et la paix vous soient données de par Dieu, notre Père, et de par le Seigneur Jésus-Christ.

3Je rends grâces à mon Dieu toutes les fois que je fais mention de vous. 4En priant toujours pour vous tous avec joie dans toutes mes prières. 5A cause de votre attachement à l'Evangile, depuis le premier jour jusqu'à maintenant. 6Etant assuré de cela même, que celui qui a commencé cette bonne œuvre en vous, l'achèvera jusqu'à la journée de Jésus-Christ : 7Comme il est juste que je pense ainsi de vous tous, parce que je retiens dans mon cœur que vous avez tous été participants de la grâce avec moi dans mes liens, et dans la défense et la confirmation de l'Evangile. 8Car Dieu m'est témoin que je vous aime tous tendrement, conformément à la charité de Jésus-Christ. 9Et je lui demande cette grâce, que votre charité abonde encore de plus en plus avec connaissance et toute intelligence. 10Afin que vous discerniez les choses contraires, pour être purs et sans achoppement jusqu'à la journée de Christ; 11Etant remplis de fruits de justice, qui [sont] par Jésus-Christ, à la gloire et à la louange de Dieu.

Luc 9.44-50

44 Vous, écoutez bien ces discours : car il arrivera que le Fils de l'homme sera livré entre les mains des hommes. 45Mais ils ne comprirent point cette parole, et elle leur était tellement obscure, qu'ils ne la comprenaient pas; et ils craignaient de l'interroger touchant cette parole.

46 Puis ils entrèrent en dispute, pour savoir lequel d'entre eux était le plus grand. 47Mais Jésus voyant la pensée de leur cœur, prit un petit enfant, et le mit auprès de lui; 48Puis il leur dit : quiconque recevra ce petit enfant en mon Nom, il me reçoit; et quiconque me recevra, il reçoit celui qui m'a envoyé. Car celui qui est le plus petit d'entre vous tous, c'est celui qui sera grand.

49Et Jean prenant la parole, dit : Maître, nous avons vu quelqu'un qui chassait les démons en ton Nom, et nous l'en avons empêché parce qu'il ne [te] suit point avec nous. 50Mais Jésus lui dit : ne l'en empêchez point; car celui qui n'est pas contre nous, est pour nous.





Հոգեւոր Հովիւի Պատգամը



«Աշակերտներուն մէջ վեճ մը յառաջ եկաւ, թէ արդեօք իրենցմէ ո՞վ է մեծը: Երբ Յիսուս իմացաւ անոնց սրտին խորիւրդները, վերցուց մանուկ մը, կանգնեցուց անոնց մէջ իրեն մօտ եւ ըսաւ անոնց. «Ով որ այս մանուկին ընդունի իմ անունովս, ինծի կ'ընդունի. իսկ ով որ ինծի ընդունի, կ'ընդունի զիս ուղարկողը. որովհետեւ, ով որ ձեր մէջ փոքրագոյնն է, ան' է մեծը»:

(Դուկ. 9:46-48)

Սիրելի հաւատացեալներ,

Աւետարանական այս հատուածը, ուր առաքեալները կը վիճէին առաջնահերթութեան մասին, կը յիշատակուի նաեւ Մատթէոս եւ Մարկոս առաքեալներուն կողմէ գրուած ավետարաններուն մէջ (Մատթ. 18:1-5, Մարկ. 9:33-37): Ահա նաեւ մէկ այլ ուշագրաւ դրուագ, որ անմիջական կապի մէջ է մեր քննարկելիք հատուածին հետ. «Չեքեղէսի որդիները՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը, գացին անոր մօտ եւ ըսին անոր. «Վարդապետ, ինչ որ քեզմէ պիտի ինդրենք, կը կամենանք, որ ընես մեզի համար»: Եւ ան անոնց ըսաւ. «Ի՞նչ կը կամենաք ինձմէ, որ ընեմ ձեզի համար»: Եւ անոնք ըսին անոր. «Շնորհք տուր մեզի, որ նստինք մէկս՝ քու աջիդ եւ միւսս՝ ձախիդ, քու փառքիդ մէջ» (Մարկ. 10:35-38):

Այս հատուածները կը բացայայտեն մեզի մարդկային հպարտ- ութեան ու փառասիրութեան դրսեւորումները, որ չէին շրջան-

ցած Նաեւ առաքեալներուն: Սակայն պիտի պարզաբանենք, որ անոնք ի յայտ եկան եւ նկարագրուեցան աւետարաններուն մէջ՝ Աստուծոյ թոյլտուութեամբ, որպէսզի հետագայ սերունդներուն առջեւ բացուի մարդկային եութեան ողջ մեղսաւորութիւնը, թուլութիւնն ու ոչնչութիւնը: Նաեւ պարզ կը դառնայ մեզի համար, որ ինչքան ալ Քրիստոսի աշակերտները ի սրտէ կը սիրէին ու նուիրուած էին Տիրոջը, սակայն ոչ մէկ կերպով չէին կարողանար ձեռքազատուիլ Աստուծոյ Մեսիայի թագաւորութեան մասին հրեական սխալ պատկերացումներէն, ուստի եւ ողջ խորութեամբ չէին ընկալեր Աստուծոյ սուրբ գործը: Բանն այն է, որ այս իրադարձութիւններէն անմիջապէս առաջ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս սկսաւ արդէն բացայայտ խօսիլ իրեն սպասուող չարչարանքներուն, խաչին վրայ անարգ մահուան եւ երրորդ օրուան յարութեան մասին (Մատթ. 16:20): Եւ այստեղ եւս մէկ անգամ համոզուեցաւ, թէ դեռեւս որչափ հեռու էին աշակերտները Չինք հասկնալէն:

Իսկ ահա Տիրոջ պատասխանը աշակերտներուն այն հարցումին, թէ ո՞վ պէտք է իրենցմէ մեծը ըլլար Քրիստոսի արքայութեան մէջ, որուն շուտով կը սպասէին, ուղղակի եւ վճռականօրէն ուղղուած էր արմատախիլ ընելու անոնց ձգտումները դէպի առաջնութեան. «...այլ ձեզմէ ով կամենայ մեծ ըլլալ, թող ըլլայ ձեր սպասաւորը. եւ ձեզմէ ով կամենայ առաջին ըլլալ, բոլորին ծառայ թող ըլլայ.» (Մարկ. 10:43, 44): Եւ չնայած Երկնային Արքայի յայտնութիւնը մարդկային մարմնին մէջ, ծնունդը՝ ոչ թէ արքայական պալատին մէջ, այլ՝ ախոռին մէջ, թափառական ու ամենայն հարմարաւետութենէն զուրկ կեանքը, իսկ այնուհետեւ կրած չարչարանքներն ու անարգ մահը՝ մարդկութեան մեղքերը քաւելու համար, արդէն իսկ ակնյայտ օրինակ մըն էր՝ մեծագոյն խոնարհութեան, սակայն Յիսուս Քրիստոս տեսաւ անհրաժեշտութիւնը, մէկ անգամ եւս, Իր խօսքով մէկընդմիջտ սահմանելու համայն մարդկութեան համար, որ առաջնութիւնը իր արքայութեան մէջ կը տրուի ոչ թէ անոր, որ կը ձգտի ամենէն բարձր ըլլալ, այլ անոր՝ ան որ կը խոնարհեցնէ իր անձը՝ միւսներուն զիջելով առաջին ու բարձր տեղերը: Այսինքն անոնք մեծ պիտի ըլլային խոնարհութեան մէջ: Եւ Աստուածորդիի սեփական օրինակը, որ Տէրը մատնացոյց ըրաւ՝ մեծագոյնն էր առաքեալներուն եւ մեզի համար, որուն պէտք է բոլորը հետեւին. «որովհետեւ մարդու Որդին չէկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու եւ տալու իր անձը

որպես փրկանք շատերու փոխարեն» (Մարկ. 10:45): Այսպիսով, Տերը ամբողջովին գլխիվայր կը շրջէ մարդկային թիւր պատկերացումները՝ պաշտօնակարգութեան վերաբերող: Զանգի երկրային արքաները կ'ապրէին շքեղութեան ու աշխարհիկ փայլքի մէջ եւ իրենց կարծեցեալ բարձրուկքէն կը նայէին իրենց հպատակներուն աղքատութեան ու նեղութիւններուն: Իսկ Տերը ցոյց տուաւ բոլորովին հակառակ կերպարը՝ խոնարհ սիրոյ վստմութեան ու վեհութեան կերպարը: Եւ որպէսզի անելի ակնյայտ ու հասկնալի ըլլայ այս նոր կարգը, Տերը իր մօտ կանչեց մանուկի մը, որ ժամանակագրի վկայութեամբ, հետագային դարձաւ Աստիոցի եպիսկոպոս, սուրբ Նահատակ Իգնատիոս Աստուածազգեացը, կանգնեցուց անոր աշակերտներուն միջեւ եւ մատնացոյց ընելով՝ ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չդառնաք ու չըլլաք մանուկներու պէս, երկինքի արքայութիւնը չէք մտներ: Արդ, ով որ իր անձը կը խոնարհեցնէ ինչպէս այս մանուկը, երկինքի արքայութեան մէջ ան է մեծը: Եւ ով որ իմ անունովս այսպիսի մանուկ մը ընդունելու ըլլայ, ի՛նծի կ'ընդունի» (Մատթ. 18:3-5): Այսինքն, եթէ անոնք չիրաժարին իրենց սխալ պատկերացումներէն Զրիստոսի թագաւորութեան մասին եւ այդ թագաւորութեան մէջ առաջին տեղերը գրաւելու իրենց փառասէր յոյսերէն, ապա երբեք չեն մտներ Երկինքի արքայութիւն:

Մանուկները մաքրամաքուր սիրտ ունին ու պարզամիտ են: Անոնք զուրկ են իրենց անձը բարձրացնելու ու բան մը ձեռք ձգելու կանխակալ մտքերէն: Անոնք երկչոտ են ու խոնարհ: Անոնց մէջ բացակայ է նախանձը, փառասիրութիւնն ու առաջինը ըլլալու ցանկութիւնը: Ահա այս յատկանիշները պիտի ունենան անոնք, որոնք կը ցանկան ժառանգել Աստուծոյ երկնային արքայութիւնը: Այսինքն ան՝ որ կը հրաժարի իր կարծեցեալ մեծութենէն, փառասիրութենէն ու հպարտութենէն եւ կ'ընդունի խոնարհութեան եւ հեզութեան իմաստութիւնը, կը դառնայ այնքան փոքր, որքան այդ երեխան՝ միայն ան էր որ մեծ նշանակութիւն ունեցաւ Տիրոջ երկնային արքայութեան մէջ:

Միաժամանակ Յիսուս Զրիստոս հրաշալի օրինակ մը տուաւ իր աշակերտներուն՝ Աստուծոյ արքայութեան ժառանգորդներուն փոխյարաբերութիւններուն մասին. «Եւ ով որ իմ անունովս այսպիսի մանուկ մը ընդունելու ըլլայ, ի՛նծի կ'ընդունի» (Մատթ. 18:5): Այսինքն ան որ Յիսուս Զրիստոսի անունով՝ սիրով կը

վերաբերի այդպիսի փոքրիկ երեխաներուն կամ այն հեզ ու խոնարհ մարդոց հետ, որոնք կը նմանին այդ մանուկներուն, հետեւած կ'ըլլան Յիսուսի պատգամին՝ սիրով վերաբերելու բոլոր տկարներուն ու անարգուածներուն, անոր միջոցաւ ընդունելով միայն Աստուծոյ Միածին Որդին:

Ինչպէս արդէն նշեցի, մեր Տիրոջ ողջ կեանքը խոնարհութեան մեծ դաս մըն է, որ տրուեցաւ մեզի՝ մեր իսկ փրկութեան եւ Աստուծոյ արքայութեան արժանանալու համար: Ու ինչքան ալ մեր մեղաւոր հոգիներուն համար դժուար թուի մեր հպարտութենէն ու փառասիրութենէն հրաժարումը, մենք քաջ պիտի գիտակցինք, որ խոնարհութիւնն է Աստուծոյ արքայութիւն տանող ճշմարիտ ուղին: Եւ պետք է հասկնանք, որ Զրիստոսի խոնարհութիւնը ամենեւին ալ թուլութիւն չէ, ինչպէս կը կարծեն անհաւատները, այլ բացարձակ ու կատարեալ ուժ: Զանի որ ինչպէս բազմիցս ցոյց տուած է մարդկային պատմութիւնը, այն աշխարհիկ թագաւորները եւ բռնապետերը, որոնք իրենց իշխանութիւնը հիմնած են բռնութեան ուժով, ժամանակաւոր բնոյթ կրած են եւ անխուսափելիօրէն կործանման ենթարկուած են: Իսկ թագաւորութեան ու բարձրութեան օրինակը, որ Զրիստոս ցոյց տուաւ խոնարհութեան եւ զոհաբերութեան միջոցով, ան այն փառքն ու մեծութիւնն է, որ յաւիտենական է: Ի հարկէ, բոլորն ալ կը ցանկան յարմարաւետ ու անհոգ կեանքով ապրիլ: Սակայն Յիսուս Զրիստոս մարդկութեան առջեւ բացաւ մէկ այլ հարթութիւն՝ չփնտռել սէր, այլ պատգամեց՝ սիրել, չգերադասել իր անձը, այլ խոնարհեցնել այդ ուրիշներուն առջեւ: Տերը մեր առջեւ բացաւ Երկինքի բոլոր գաղտնիքները, Նոր Ուխտի, նոր ծնունդի բոլոր օրէնքները, որպէսզի անոնց հետեւելով՝ վերածնինք, որպէս նոր արարածներ: Այսպիսով մեր առջեւ դրուած խնդիրն է՝ խորհիլ ու գործել Զրիստոսի այն պատգամներուն համաձայն, որ այսօր սորվեցանք Աւետարանական այս հատուածներէն եւ որոնք մեր առջեւ կը բանան յաւիտենական կեանքի ու Աստուածային ուրախութեան ճշմարիտ ճանապարհը: Յիշենք, որ Մարդու Որդին չեկաւ, որպէսզի իրեն ծառայեն, այլ զոհաբերութեան ու խոնարհութեան ծառայութեամբ իր կեանքը տուաւ՝ մեզ մեր մեղքերէն փրկագնելու ու յաւիտենական կեանքին արժանացնելու համար:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , ամէն:

Օրհնութեամբ՝

Տեր Դաւիթ քահանայ Մարգարեան

Résumé de la Prêche

Une préoccupation entra dans l'esprit des Apôtres, savoir lequel d'entre eux pouvait être le plus grand.

Jésus voyant leur tourment prit un enfant et leur dit "Celui qui récite en mon nom cet enfant, me récite et récite celui qui m'a envoyé car le plus petit parmi vous est grand" (Luc9:46-48). Cette parabole révèle l'orgueil s'extérioriser même chez les Apôtres qui malgré leur attachement à Jésus ne réalisaient pas la petitesse et la vanité de l'être humain.

Ailleurs Jésus dit aux Apôtres (Marc 10:43) "Quiconque veut être le premier parmi vous ,qu'il soit votre serviteur" La vie de Jésus est un témoignage d'humilité qui nous guide, dans notre vie quotidienne, sur le chemin vie éternelle.

En bénédiction
Père David Margaryan
Prêtre paroissial

INVITATION

À l'occasion du 49-ème anniversaire de l'achat,
de la consécration et dénomination de la Cathédrale Armenienne
St. Grégoire l'Illuminateur de Montréal

Le Père David Margaryan
et le Conseil Paroissial de la Cathédrale

ont l'honneur de vous convier

dimanche 15 decembre 2019 à 10:30h

à la Sainte Messe solennelle qui sera célébrée
par Sa Grace Monseigneur
ABGAR HOVAKIMYAN

Primat Diocese Armenienne du Canada

Prière d'Action de Grâce pour les bienfaiteurs de la Cathédrale

*Office de Requiem pour le repos des âmes des disparus,
serviteurs et bienfaiteurs de la Cathédrale*

*La Messe sera interprétée par la chorale "Gomidas"
Sous la direction de Sarkis Barsemyan*

*A l'issue de la Sainte Messe, une réception aura lieu
dans la salle Marie Manoogian organisée
par l'Union des Dames et Auxiliares de la Cathédrale,
qui sera précédé par le programme musical.*

Bureau de l'église

Շաբթուայ խորհրդածութիւնը

- «Հիմա այնպիսի ժամանակներն են, որ գիտիք շատ աղօթքներ, բայց քիչ կ'աղօթենք: Պահքի կերակուր կ'ուտենք, բայց պահեցողութեան մէջ չենք: Հոգեւոր կեանքի վերաբերեալ գիտելիքներ կը կուտակենք, բայց անոր փորձառութիւնը չունինք: Մեղքերը կը խոստովանինք, բայց չենք ապաշխարեր: Եկեղեցիներ կը յաճախենք եւ հոգեւոր արարողութեան կը մասնակցինք, բայց մեր հոգին չի խոնարհիր Արարիչին առջեւ: Այս բոլորը անոնցմէ է, որ սիրտը փակ է: Այն պետք է բացուի, որ Զրիստոս մուտք գործէ»:

Ս. Պայիսիոս Աթոսացի

- «Աստուած կը հարստացն է այն հոգին, որ ամէն ինչէն իրեն կ'ազատէ»:

Ս. Հայր Պիոյ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն ունի
ուսուցիչներու՝ դասաւանդելու գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել
քարտուղարութեան՝ (514) 279-3066
տուեալները ուղարկել հետեւեալ Ե-Հասցէին
stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ Հոգեհանգստեան
Պաշտօն խնդրելու համար Եկեղեցի հեռաձայնել պահանջուած
հոգեհանգիստի թուականէն մէկ շաբաթ առաջ
միկնչեւ այդ շաբթուայ Հինգշաբթի կ.ե. ժամը 5-ը:

Ե-Հասցեով (e-mail) խնդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ
խնդրանք պետք է հաստատուին եւ վերստուգուին քարտուղարութեան
հետ **հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:**

Շնորհակալութիւն
Եկեղեցւոյ Գրասենեակ



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔ

ՀԱԻԱՏՔԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Կը հաւատանք մէկ Աստուծոյ,
Ամենակալ Զօր, որ արարիչն է
երկինքին ու երկրին. տեսանելի եւ
անտեսանելի ստեղծուածներուն:

Կը հաւատանք մէկ Տէր Յիսուս Քրիստոսի.
Աստուծոյ Որդիին. որ իր Աստուծմէ ծնած է
որպէս միակ ծնունդ. այսինքն՝ Զօրը Էութենէն
Է: Աստուած է Աստուծմէ ծնած. Լոյս է՝ Լոյսէն
յառաջ եկած: Ճշմարիտ Աստուած.

եւ ո՛չ արարած:

Անկա Յօրը բնութենէն է:

Իրմով ստեղծուած է ամէն ինչ որ կայ
երկինքի մէջ եւ երկրի վրայ. տեսանելի թէ
անտեսանելի: Ինքն էր որ մեզի՝

մարդերու եւ մեր փրկութեան համար
երկինքէն իջաւ եւ մարմին առաւ,
մարդացաւ, Սուրբ Զոգիին

ներգործութեամբ սուրբ կոյս Մարիամէն
ծնելով որպէս կատարեալ մարդ՝

մարմինով, ինչով եւ միտքով, եւ ամէն
ինչով որ մարդկային է. Ո՛չ թէ

երեւութեամբ, այլ ճշմարտապէս:

Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ,
երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն
մարմինով երկինք ելաւ եւ Զօրը աջ կողմը
նստաւ:

Կը հաւատանք նաեւ՝ թէ վերստին պիտի
գայ, նոյն մարմինով եւ Զօրը փառքով,
ողջերն ու մեռածները դատելու. ինք՝
որուն թագաւորութիւնը անվախճան է:

Կը հաւատանք անեղ եւ կատարեալ
Սուրբ Զոգիին, որ խօսեցաւ Օրէնքին,
մարգարէներուն եւ Աւետարաններուն
ընդմէջէն. որ Յորդանան գետին վրայ
իջաւ, առաքելներուն ուսուցանեց եւ
սուրբերուն մէջ բնակեցաւ:

Կը հաւատանք նաեւ մէկ, ընդհանրական
եւ առաքելական սուրբ Եկեղեցիին.

մէկ մկրտութեան, ապաշխարութեան,
մեղքերու քաւութեան ու թողութեան.
մեռելներու յարութեան, հոգիներու եւ
մարմիններու յաւիտեանական
դատաստանին, երկինքի արքայութեան
հաստատումին եւ յաւիտեանական
կեանքին:

LE SYMBOLE DE LA FOI

Nous croyons en un Dieu,
le Père Tout Puissant,
créateur du ciel et de la terre,
des choses visibles et invisibles.

Et en un Seigneur, Jésus Christ,
le Fils de Dieu, le Fils unique né de Dieu le Père,
c'est-à-dire de l'essence du Père, Dieu de Dieu,
lumière de lumière, vrai Dieu de vrai Dieu, engendré
et nom créé; lui-même de la nature du Père,
par qui toute chose a été créée dans les cieux sur
la terre, les choses visibles et invisibles;
qui, pour nous les hommes, et pour notre salut, est
descendu des cieux, s'est incarné, s'est fait homme,
et est né parfaitement de Marie, la Vierge sainte,
par l'action de l'Esprit Saint et il prit d'Elle corps,
âme et esprit et tout ce qui est dans l'homme,
en réalité et non fictivement;
il subit la passion, fut crucifié, enseveli;
il est ressuscité le troisième jour; monté aux cieux
avec le même corps, il est assis à la droite du Père.
Il viendra, avec le même corps et dans la gloire du
Père, pour juger les vivants et les morts, et son
règne n'a pas de fin. Nous croyons aussi au Saint
Esprit increé et parfait, qui a parlé dans la Loi, les
prophètes et les Evangiles, qui est descendu sur le
Jourdain, a prêché en la personne des Apôtres et a
habité dans les saints.

Nous croyons aussi en une seule Eglise sainte,
catholique et apostolique,
en un baptême, au repentir,
à l'expiation et à la rémission des péchés.
A la résurrection des morts, au jugement éternel
des âmes et des corps, au royaume des cieux
et à la vie éternelle

ՏՕՆԵՐ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ ՅԻՄՆԱԿԱՑ (17-23 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2019)

Ըստ հայկական ծեսին՝ այս շրջանը կ'ընդգրգե 50 օր եւ անոր համար ալ կը կոչուի Յիսնակաց. կը սկսի 15 Նոյեմբերի յաջորդող կիրակին եւ կը վերջանայ 5 Յունուարին

Ահա կը սկսիք Յիսնակաց շրջանը, որ Սուրբ Ծնունդի եւ Յայտնութեան Տօնի պատրաստութեան շրջանն է. ըստ հայկական ծեսին՝ այս շրջանը կ'ընդգրգե 50 օր եւ անոր համար ալ կը կոչուի Յիսնակաց. կը սկսի 15 Նոյեմբերի յաջորդող կիրակին եւ կը վերջանայ 5 Յունուարին, այսինքն Յայտնութեան տօնի նախօրեակին:

Մինչդեռ լատինական եւ այլ ծեսերու մօտ՝ ան կը կոչուի Ամովենթուս եւ կը տւուի միայն 25 օր, կը սկսի մէկ դեկտեմբերին եւ վերջ կը գտնուի 25 դեկտեմբերին, Ծննդեան տօնին օրը:

Յիսնակացը յատուկ է միայն առաջին շաբթուայ ընթացքին կատարուող Պահքը.

Մինչ Զատիկէն առաջ՝ Հայ Եկեղեցին 40 օր պահք կը տօնօրինէ, Յիսնակաց պահքը կը վերածուի միայն 5 օրուայ, սկսելով առաջին երկուշաբթիէն մինչեւ ուրբաթ օրը: Յիսնակաց շրջանի մնացեալ բոլոր օրերը կարելի է սուրբերու տօնակատարութիւն ընել, եւ պահք ու ծմբ բռնել:



Պահքի նշման կարգը

Նշանակալից է Յիսնակաց առաջին Կիրակի օրուան անտարանը, որով Տերը մեզի կը սորվեցնէ Տերունական Աղօթքը “Հայր մեր”։ Յիշենք որ Նոյնպէս կը սկսի նաեւ Մեծ Պահքի շրջանը, ուր Բարեկենդանի անտարանը դարձեալ Հայր մեր աղօթքին ուսուցումն է, այն տարբերութեամբ որ Մեծ Պահքի սկիզբը կը կարողացուի Մատթեոսի Անտարանը, մինչդեռ Ծննդեան պատրաստութեան առթիւ՝ կը կարողացուի Դուկասի անտարանը: Առաքեալները կը խնդրեն Յիսուսէն որ իրենց աղօթել սորվեցնէ, որով յաճախ կը տեսնուին իրենց Տերը յափշտակուած աղօթքի մէջ եւ կ'ուզէին իրենց բնական այդպէս աղօթել եւ ոչ թէ Դպիրներու սորվեցուցածին նման, որ ուրիշ բան չէր եղէ ոչ՝ ընթերցումը սաղմոսներուն, դասական ու միապաղաղ ձեւով, իրենց գլուխը առաջ եւ ետ տանելով: Յիսուս երբ աղօթէր, անշարժ կը մնար եւ կարծեք կը միանար իր Հօր եւ փոխադարձ խօսակցութիւն մը տեղի կ'ունենար Հօր եւ Արդույ միջեւ. Արդէն Յովհաննէս Սուրբիչ եւս Նոր ձեռի աղօթքներ սկսած էր սորվեցնել իր աշակերտներուն, ինչ որ քարի նախանձը կը շարժէ Յիսուսի առաքեալներուն:

“Հայր մեր” աղօթքը այդ օրէն ի վեր՝ պաշտօնական աղօթքը դարձաւ Զրիստոսի հաւատացեալներուն եւ բոլոր եկեղեցիները անխտիր, Նոյնիսկ բողոքականները գայն կը կիրարկեն իրենց պաշտամունքներուն մէջ:

Այս ամբողջ շաբթուայ ընթացքին՝ կը կարդանք Դուկասի անտարանին 11-րդ գլուխը, ինչպէս նաեւ Պօղոս Առաքեալի Կողոսացոց ուղղած Թուղթը:

Հինգշաբթի օրը՝ 21 Նոյեմբերին, կը տօնենք Աստուածածնայ Ընծայումին տօնը, որ կը յիշատակէ Մարիամի Նուիրումը տաճարին, որպէս անդրանիկ զաւակ իր ծնողքին, Յովակիմի եւ Աննայի, իր ծննդէնէն 75 օր վերջ, ինչպէս որ կը հրամայէր Տիրոջ օրէնքը: Այս տօնը երկրորդական ըլլալով հանդերձ՝ Հայ ծեսին մէջ տեղ գրաւած է, ոչ սակայն իւրայատուկ շարականով մը, այլ Աստուածածնայ Ծննդեան տօնի շարականներն օգտագործելով:

Շաբաթ 23 Նոյեմբերին՝ կը տօնենք հետեւեալ սուրբերը.

- Սուրբ Գրիգոր Սքանչելագործ, Հայրապետ Պոնտոսի շրջանի Նեօ-Կեսարիոյ քաղաքին, 240-էն մինչեւ 270 թուականը. Իր մասին կ'ըսուի թէ երբ Եպիսկոպոս օծուեցաւ, իր բազմամարդ քաղաքին մէջ՝ միայն 17 քրիստոնէսներ կային. Իր մահուան օրը՝ Նոյն քաղաքին մէջ միայն 17 հեթանոսներ մնացեր էին:

- Սուրբ Միւռն, Եպիսկոպոս Կրետի կղզիին, որ ապրեցաւ գրեթէ հարիւրամեայ, 250-350 թուականը եւ սրբութեան մեծ համբաւ թողուց ամենուրեք: Կ'ըսուի թէ իր մահէն երկու դար ետք՝ իր մարմինը անեղծ ու անապական գտնուած է: Նոյն օրը տօնն է Ս. Յովհաննէս Ոսկեբերանի՝ Կոստանդնուպոլսոյ Հայրապետին, եւ Երանելի Սալվադորէ Լիլլի իր Նահատակ ընկերներուն:

Նաեւ տօնն է Երանելի Սալվադորէ Լիլլի ու իր Նահատակ ընկերներուն՝ Յովհաննէս Պալեան, Խաչեր Խոտանեան, Ծերոն Գուրաճեան, Վարդավառ Թմբիկեան, Պողոս Երամեան, Դաւիթ Դաւիթեան եւ Դաւիթ Թորոսեանի:

Կիրակի 24 Նոյեմբերը, Յիսակաց Բ. Կիրակին է:

Կիրակի, 17 Նոյեմբեր 2019

ԲԱՐԵՎԵՆՂԱՆ ՅԻՄՆԱԿԱՑ ՊԱՀՈՑ

Յիսակը յիսնօրեայ Պահքի շրջան է, որ կը նախորդէ Աստուածայայտնութեան տօնին:

Յիսակաց Բարեկենդանը 7 օրերու շարժականութեամբ կը նշուի Նոյեմբեր 15-էն մինչեւ 21-ը, այս տարի՝ Նոյեմբեր 15-ին կը նշուի:

ՅԻՄՆԱԿԱՑ ԲԱՐԵՎԵՆՂԱՆ

Ս.Ծնունդի պատրաստութիւնները կը սկսին ծնունդէն յիսուն օրեր առաջ. Յիսակաց պահքով: Առաջին, չորրորդ եւ հինգերորդ շաբաթները, պահքի շաբաթներ են, աշխարհականներու համար. Պահքին Նպատակը Աստուածային ներկայութիւնը մեր մէջ հաստատելն է: Յիսակի շրջանին, կիրակնուրբի եօթը օրերուն ընթացքին մէյմէկ ծիրանագոյն մոմեր կը վառուին «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի» շարականին երգեցողութեամբ:

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ.

Հովիւք երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի
Ծնաւ Նոր արքայ ի Բեթղէհեմ քաղաքի.

Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:
Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ.

Ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմացաւ:»Ամէն

HOLIDAYS

Wednesday, November 21, 2019

PRESENTATION OF THREE-YEAR-OLD ST. MARY TO THE CHURCH

One of the feasts dedicated to the Holy Virgin is the presentation of three-year-old Mary (Holy Mother of God) to the temple. All Christian Churches celebrate this feast of November 21. According to the Holy Tradition of the Church, after Mary's becoming three-year-old, the parents of the Holy Virgin, Jehoiakim and Anna, fulfilling their promise, bring Mary to the Temple and present her to God. Mary remains in the Church till her engagement.



Establishment of the feast is related to the Cathedral, which was built by the King Justinianos in honor of St. Mary, the Holy Mother of God, in the place of the old Jewish temple, on the hill Moria. The cathedral had been consecrated on November 21, 543 AD.

After 638 AD, when the Cathedral, built by the King Justinianos, is converted into a Moslem temple, the celebration of the feast spreads throughout the entire Christian world. The Feast of presentation of St. Mary to the Church has been included in the Armenian Apostolic Church Calendar in the nineteenth century.

Sunday, November 17, 2019

EVE OF THE FAST OF ADVENT

This is the beginning of Advent - the period of "Fifty Days" (Hisnak or Yisnak) beginning with the Sunday nearest to the 25th of November and ending with the Saturday next after the Sunday nearest to the 6th of January, the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ. Thus it covers a period of seven constant days.



ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ

ինչպես ամեն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին, այս շաբաթ եւս ուսումնասիրեցինք շատ կարեւոր սիւլթ մը: Հոգեւոր Հովիւին հետ մտերմիկ գրոյցով մը այս անգամ սորվեցանք եւ քննարկեցինք

«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ» թեման:

Comme tous les jeudis soir à 7:00 PM, hier soir aussi pendent l'étude biblique nous avons étudié un sujet important.

Avec nos paroissiens et paroissiennes nous avons appris le thème

«VERTU CHRÉTIENNE ».

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԿԻՐԱԿԻ, 17 ՆՈՅԵՄԲԵՐ 2019



Տիկ. Այտա Կինհանի եւ ընտանիքին,
Տիկ. Սուրբիկ Էրքմէնի,
Պր. Սամսոն Օգարարաթի եւ ընտանիքին,
Տօքթ. Վարուժան Օգարարաթի,
Տիկ. Մարկարէթ Փայլանի եւ ընտանիքին,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հօր, եղբօր եւ հօրեղբօր՝

ՄԱՐԳԱՐ ՕԶԱՐԱՐԱԹԻ

(MARKAR OZARARAT)

(մահացած Պոլիս)

Մահուան 40-ին առիթով

(Հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ):



Տիկ. Էլտա Էրտօղմուշի,
Պր. Հերման Էրտօղմուշի,
Տ. եւ Տիկ. Այգ եւ Ռինա Պաղտասարեանի,
Տ. եւ Տիկ. Արթին եւ Ալէքսա Մարգիսեանի,
Տ. եւ Տիկ Վարդան եւ Անիա Սուվալեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր
եւ մեծ հօր՝

ԲԱԲԷԼ ԷՐՏՕՂՄՈՒՇԻ

(PAPEL ERDOGMUS)

Մահուան առաջին տարելիցին առիթով



Տիկ. Զապել Միւմպիւլեանի,
Տիկ. Լիւսի Միւմպիւլեանի,
Պր. Վիգէն Ադդարեանի եւ զաւակներուն,
Տօթ. Արմէն Ադդարեանի եւ Արշիլ Ադդարեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, դուստրին,
մօր եւ քրոջ`
ՏԱԹԵՒԻԿ

ՄԻՒՄՊԻԻԼԵԱՆ-ԱՂԴԱՐԵԱՆԻ
(DATEVIG SUMBULIAN-ATTARIAN)

Ինչպէս նաեւ`
Իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր`
ՀՐԱՆԴ ՄԻՒՄՊԻԻԼԵԱՆԻ
(HRANT SUMBULIAN)

Մահուան 5-րդ տարելիցին առիթով:



Ննջեցեալներու համար աղօթք

Ո՛վ բազմագուրթ Աստուած, կ'աղաչեմ եւ կը խնդրեմ Զեզմէ մեր ազգին բոլոր հին ու
նոր, հաւատքով եւ յոյսով ի Զեզ ննջածներու համար: Մանաւանդ, Զու մօտղ ննջող
իմ մարմնաւոր եւ հոգեւոր ծնողներուն, եղբայրներուն, քոյրերուն, ազգականներուն,
սիրելիներուն, բարեկամներուն, բարիին մէջ կրթող հոգեւոր վարդապետներուն,
ուսուցիչներուն, մեր բոլոր աշխատաւորներուն եւ երախտաւորներուն համար,
որպէսզի Զու զախտեանդ մեծ օրը ողորմութեամբ յիշես եւ թողութիւն շնորհես
անոնց բոլոր մեղքերուն ու սխալներուն եւ Զու աջակողմեան դասիդ սուրբերուն հետ
դասես ու թոյլ տաս լսելու Զու երանաւետ խօսքը, թէ՛ «Եկէ՛ք իմ Զօրս օրհնածները»:

Եւ, ըստ մեզի հանդէպ անոնց կատարած երախտիքներուն՝ մեկի փոխարէն
բիւրապատիկ յատուցես անոնց հոգիներուն, իսկ մեզի անոնց պարտքերէն անպարտ
դարձնես:

Զեզ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սիմէոն Կաթողիկոս
Երեւանցի

ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻՆԻՆ ԵԿԵՂԵՑՒՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mrs. Nairi Kehyaian \$1000.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ANGELE AKKELIAN:

Dr. Apkhar Papazian \$200.

HOKEHANKISD:

THE LATE ANGELE AKKELIAN:

Mrs. Betty Kiriakos \$20.

THE LATE DATEVIK SUMBULIAN-ATTARIAN

THE LATE HRANT SUMBULIAN:

Mrs. Lucy Sumbulian \$300, Mr. Viken Attarian \$200.

THE LATE KEVORK SOZKES:

Mrs. Hanim Sozkes, Mrs. Arsaluys Gerger,
Mrs. Bercuhi Sozkes \$50.

THE LATE JUSTINE ARTINIAN:

Mr. Hagop Artinian \$100, Miss Asdghig Garabedian \$50.

THE LATE KOUYOUMDJIAN FAMILY:

Mr. Vrej Toukhian \$20.

YOUGHAKIN:

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$100.



ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

**Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք՝
Թէ Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող**

**Centre Education des Adultes Outremont դպրոցին
կայանատեղիին (parking)-ին մէջ:**

Չասցեն կարելի է տեսնել ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:

**Նաեւ՝ կարելի է օգտագործել Stuart պողոտային կից գտնուող
Չիւսիսային Lajoie փողոցին երկու կողմերը:**

Շնորհակալութիւն

Ծխական Խորհուրդ

PARKING

**We would like to inform you that
you can safely park your cars**

In the parking lot of the

Center Education des Adultes Outremont School

on Bernard street.

The address can be found in the attached map below.

You can also park on both sides of North Lajoie Street

adjacent to Stuart .

Thank you

Parish Council



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2



ՄՈՆԹՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ



ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐԾ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱԶՅՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՄԵՐԳ ԼՈՒԲՈՒԲՏ

ՀԱՆՃԱՐԵՂ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ՇՆՆԴԵԱՆ 150 ԱՄԵԱԿԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
ԵՂՈՅ Կ'ՈՒՆԵՆԱՆ ԽԱՆՐԱԾԱՆՕՅ
ԱՐՈՒՆԵՍՏԱԳԵՏՈՒՆԵՐ

**Շաբաթ, 30 Նոյեմբեր
2019 երեկոյեան ժամը
8-ին**

ԵԿԵՂԵՍՈՂ ՄԵԶ:

Հանդիսութեան ասարտին՝
հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան»
սրահին մէջ:
Մանրամասնութեան համար հեռաձայնել
(514) 279-3066
Ողջ հասոյթը կը յատկացուի
Վերանորոգութեան Դրամարշալին:
Մուտքի նուէր՝ \$30



Մաշա Ճիհանեան



Մարգիս Պարսէմեան



Գոհար Մանուկեան



Cathédrale St. Grégoire l'Illuminateur à Outremont



Sous le patronage de Son Éminence
Monseigneur Abgar Hovakimyan, Primat du
Diocèse Arménien au Canada

Concert Dédié

Au prestigieux Prêtre Komitas,
Organisé par le Conseil Paroissial



Sasha Djhanian

À l'occasion du 150^{ième} anniversaire de
naissance

Avec la participation des
artistes renommés

Samedi, le 30
novembre 2019 à
20:00 à l'église
St. Grégoire



Sarkis Barsemian

Légers collations seront servies
après le concert dans la Salle
Vatché Hovsepian
Pour plus de détails, svp appeler à
(514) 279-3066
Admission : \$30



Gohar Manvelyan

49

թղթի



ՄԻԳՐԱՆՏ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՆԱՐ

ՏԱՐԵԴԱՐՁ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

ANNIVERSARY

of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Հովանաւորութեամբ

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019

Sunday, December 15th, 2019

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագիչ՝

Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական Յայտագիր
«Մարի Մանուկեան» սրահին մէջ

Anniversary Banquet & Cultural Program in «Marie Manoogian» Hall


Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել

Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

Մինչեւ 10 Դեկտեմբեր 2019

Please call to reserve (514) 279-3066

till December 10th, 2019





Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Սոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատորակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել _____ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:

- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը ըննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել

Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն

անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արծանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal